



«Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում» ՄԱԶԾ-ԿԿՀ/00098348 ծրագիր

Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի թիվ 160 մանկապարտեզի հիմնանորոգում

«Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում» ծրագիրն (2017-2023) իրականացվում է ՄԱԿ-ի Հարգացման ծրագրի (ՄԱՀԾ) հայաստանյան գրասենյակի կողմից՝ Կլիմայի կանաչ հիմնադրամի (ԿԿՀ) ֆինանսավորմամբ, ՀՀ բնապահպանության նախարարության համակարգման ներքո՝ նպատակ ունենալով նպաստել շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումներին:



«Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում» ՄԱՀԾ-ԿԿՀ Ծրագրի հիմնական գործընկերը Երևանի քաղաքապետարանն է, որը 2016թ.-ին մշակելով «Երևան քաղաքի կայուն էներգետիկ զարգացման գործողությունների» ծրագիրը, կարևորել է էներգաարդյունավետության խթանումն իր

գործունեության տարբեր ոլորտներում: Առաջնահերթությունը տրվել է նախադպրոցական ուսումնական հաստատություններին՝ երեխաների համար ավելի հարմարավետ պայմաններ ապահովելու նպատակով:

Արդյունքում՝ Երևանի քաղաքապետարանի և ՄԱՀԾ-ի միջև 2017թ.-ի ապրիլի 28-ին ստորագրվել է Մտադրությունների մասին հուշագիր, որով փորձարկվել է համագործակցության նոր ձևաչափ. Երևանի քաղաքապետարանը ՄԱՀԾ-ին է պատվիրակել աշխատանքների իրականացումը, իսկ Ծրագիրն իր հերթին համաֆինանսավորել է էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումները:

Այս համագործակցությամբ ճանապարհ է հարթվել «Երևանի էներգաարդյունավետության ծրագրի» մեկնարկի համար՝ 2017թ.-ի դեկտեմբերի 1-ին Երևանի քաղաքապետարանի և Եվրոպական ներդրումային բանկի (ԵՆԲ) միջև ստորագրված ֆինանսական պայմանագրի հիման վրա: Այդ պայմանագրով ներգրավվել է 7 մլն եվրո վարկ ԵՆԲ-ից, 5 մլն եվրո դրամաշնորհ՝ Արևելյան Եվրոպայի էներգաարդյունավետության և շրջակա միջավայրի գործընկերության հիմնադրամից (E5P):

Երևանի քաղաքապետարանի և ՄԱԶԾ-ի միջև ստորագրված հուշագրով հիմնա- նորոգման համար ընտրվել են Էրեբունի վարչական շրջանի թիվ 3 մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնն ու Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի թիվ 160 մանկապարտեզը: Վերջինիս ընտրությունը մեծապես պայմանավորված է եղել նրանով, որ շենքը, կառուցված լինելով 1960-ական թվականներին, ունեցել է շահագործման մեծ ծախսեր և հարմարավետության ոչ բավարար մակարդակ:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Հուշագրի շրջանակում Երևանի քաղաքապետարանի ներկայացրած մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների նախագիծը լրամշակվել է Ծրագրի կողմից՝ ներառելով էներգաարդյունավետության բարձրացման միջոցառումներ, որոնց իրականացման համար Ծրագրի կողմից ներդրվել է շուրջ **12 մլն ՀՀ դրամ**: Վերանայված նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա՝ ՄԱԶԾ ընթացակարգերով հայտարարվել են կապալառուների և մատակարարների մրցույթներ և ընտրվել համապատասխան որակավորում ունեցող կազմակերպություններ:

Մակերես՝ 1,350 մ²

Ներդրում՝ 99 մլն ՀՀ դրամ

Սկիզբ՝ 2017թ. օգոստոս

ՄԱԶԾ-ԿԿՀ ծրագրի ֆինանսավորում՝ 13%

Ավարտ՝ 2017թ. նոյեմբեր

Երևանի քաղաքապետարանի ֆինանսավորում՝ 87%

Ծրագիրն ու Երևանի քաղաքապետարանն ամենօրյա ռեժիմով հետևել են աշխատանքների ողջ ընթացքին: Վերահսկողություն է իրականացվել մատակարարվող նյութերի, սարքավորումների ու ապրանքների, ինչպես նաև շինարարական աշխատանքների որակի նկատմամբ:

Վերնաձածկը ջերմամեկուսացվել է տեղական արտադրության հանքաքամբակե ներքնակներով, իսկ արտաքին պատերը (մասամբ)՝ էքստրուդացված փրփրապոլիստիրոլե սալերով:




Փայտե հին պատուհաններն ու դռները փոխարինվել են մետաղապլաստե 4-խցիկանի շրջանակով, երկշերտ ապակեպատվածքով պատուհաններով և դռներով:

Ներդրվել է լուսադիողային լուսավորման համակարգ. բոլոր լամպերը և լուսատուները փոխարինվել են նոր էներգաարդյունավետ լուսադիողային լուսատուներով՝ շենքի լուսավորության մակարդակը համապատասխանեցնելով գործող նորմերի պահանջներին:



Ջեռուցման համակարգի հին թուջե մարտկոցները փոխարինվել են պողպատե պանելային մարտկոցներով, որոնք ունեն նաև կարգավորիչ փականներ: Վերջինիս շնորհիվ, հնարավոր է կարգավորել ջերմաստիճանը տարբեր սենյեքում: Համակարգի պողպատե խողովակները (մասամբ) փոխարինվել են պոլիպրոպիլենային խողովակներով:

Փոխվել են բոլոր սենյակների ու հանդիսությունների սրահի հատակները: Հիմնովին վերանորոգվել են սանհանգույցները:



Շենքի ինֆրակարմիր պարկերը

Բարեկարգվել է նաև շենքի բակը՝ երեխաների բացօթյա հարմարավետ ժամանցն ապահովելու նպատակով:

Արդյունքում, շենքի **էներգաարդյունավետության մակարդակը բարձրացվել է շուրջ 40%-ով**, իսկ Ծրագրի հիմնական ցուցանիշ հանդիսացող **CO₂ արտանետումների կրճատումը կազմել է 23 տ/տարի**:

